

особенности, воздушного транспорта. Посредством воздушного транспорта осуществляются перевозки пассажиров в другие страны, а также ввоз в республику основной части грузов.

Одной из основных проблем, сдерживающих развитие грузовых авиаперевозок в Армении, является отсутствие грузовых самолетов. Возникает вопрос: почему их нет до сих пор в армянской Авиации? Во-первых, по географическому расположению Армения не является транзитной республикой, и этим объясняется малый объем транзитного грузопотока. Во-вторых, в основном грузоперевозки осуществляются в порядке дозагрузки пассажирских самолетов, но это составляет очень маленький процент в общем объеме. Исходя из этого, необходимо создать парк грузовых самолетов из современной западной техники, что приведет к увеличению грузопотока в республику, и, вместе с увеличением потока, снизится стоимость единицы отправки грузов воздушным транспортом. Снижение цен на единицу транспортировки груза способствует снижению себестоимости товара, что, следовательно, приводит к снижению его цены продажи.

В транспортной системе Армении первое место занимает автомобильный транспорт. Доля автомобильных грузоперевозок всего перевезенного груза в 2008 году составляет 59%. На втором месте находится железнодорожный транспорт. На последнем месте – воздушный транспорт. Как уже было отмечено, воздушный транспорт является самым дорогим видом транспорта из всех остальных видов. Итак, за 2008 год всего по автомобильным сообщениям общий объем грузоперевозок составляет 5065,3 тыс. тонн, что составляет 4,2 % от всего объема грузоперевозок всеми видами транспорта. Железнодорожным транспортом было отправлено всего 2755,1 тыс. тонн (27,1%), воздушным транспортом – 10,8 тыс. тонн, что составляет маленькую долю общих грузоперевозок за весь 2008 год – 0,6% [4].

Приведен графический анализ (см. график 1), на котором видно процентное соотношение объема перевезенного груза каждого вида транспорта к общим грузоперевозкам за 2008 год.

Таким образом, становится ясно, что воздушный транспорт занимает самые низкие позиции по грузоперевозкам. Этому способствует дороговизна транспортировки. Но на сегодняшний день, воздушный транспорт лидирует с точки зрения скорости и сохранности груза. Отсутствие парка грузовых самолетов, наличие территориальной блокады и политических проблем с соседними странами – все это приводит к торможению развития авиационных грузоперевозок Армении, что, в свою очередь, оказывает немалое негативное влияние на экономику страны.

#### Լիտերատուրա

1. Беляев В., *Гражданская авиация в начале XXI века, Авиация, #8, 2004.*
2. Андерссон Б., *Мировые авиаперевозки, 2001.*
3. *Межгосударственный статистический совет СНГ, www.cisstat.com*
4. *Национальная статистическая служба Армении, www.amstat.am*

Վարչահիմնադրման տնտեսության պայմաններում Լեռնային Ղարաբաղի տնտեսությունը կրել է կենտրոնացված պլանավորման և վարչահիմնադրման մեթոդների սկզբունքների վրա հիմնված խորհրդային տնտեսական համակարգի բոլոր արատները, իսկ ժողովրդական տնտեսության կառուցվածքի ձեւավորումն իրականացվում էր ոչ թե մարզի, այլ միութենական հանրապետությունների ընդհանուր շահերի հաշվառումով: Տնտեսական հիմնախնդիրները լուծվում էին Ադրբեջանի կառավարության հետապնդած քաղաքական նպատակների հաշվառումով:

Դյուրային և միջճյուղային կառուցվածքների զարգացումը, արտադրողական ուժերի տեղաշարժը, տարածքի մեկ միավորին հասնող տնտեսական ծանրաբեռնվածությունը ակնհայտորեն չէին համապատասխանում Լեռնային Ղարաբաղի բնական-տնտեսական պայմաններին և ներուժին: Ժամանակի հետ պլանային համակարգի անարդյունավետությունն ավելի ակնհայտ էր դառնում: Գործնականում դա արտահայտվեց ձեռնարկություններում տեխնոլոգիական ավարտուն փուլերով արտադրական հզորությունների բացակայությամբ, որն իր հերթին Լեռնային Ղարաբաղի տնտեսությունը վերածել էր Ադրբեջանի հումքային կցորդի, որը գործում էր արտատնտեսական կախվածության պայմաններում: 1988-94թթ. գոյություն ունեցող այս բոլոր սահմանափակումներին ավելացավ Ադրբեջանի կազմակերպած տնտեսական շրջափակումը, հետո ավերիչ պատերազմական գործողությունները ԼՂՀ ողջ տարածքում: Արդյունքում՝ գործող արտադրական հզորությունների 85%-ը, բնակելի ֆոնդի 50%-ը, սոցիալ-մշակութային ոլորտի հարյուրավոր օբյեկտներ, ինժեներային հաղորդակցության բոլոր տեսակների մեծ մասը շարքից դուրս եկան: Այդ բարդ իրավիճակում երիտասարդ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը ստիպված էր պատերազմից ավերված տնտեսական համալիրի վերականգնման գործընթացին զուգահեռ, 1994թ. հրադադարի համաձայնագրից հետո, ծավալել տնտեսական վերափոխումների գործընթաց:

1995թ. նկատվեցին տնտեսության աշխուժացման առաջին քայլերը: ԼՂՀ զարգացման պատմության մեջ այդ փուլը բնութագրվեց որպես տնտեսական բարեփոխումների և հիմնարար վերակառուցման ժամանակաշրջան: Վերոհիշյալ միջոցառումների ռազմավարական նպատակը տնտեսական, սոցիալական, քաղաքական ժողովրդավարության համակարգի զարգացման հիմքի վրա բաց հասարակության ստեղծումն էր: Այդ առնչությամբ հանրապետությունում սկսվեցին սեփականության մասնավոր ձեռք գրագրությունը, ինչը շուկային հագեցրեց ապրանքներով ու ծառայություններով: Չնայած փողերի արժեզրկման ընթացող գործընթացին, բնակչության շրջանում դրսևորվեցին գործարարության նկատմամբ որոշակի խթաններ:

Շուկայական հարաբերություններին անցման գործընթացը պահանջեց մի շարք հիմնախնդիրների շտապ կարգով լուծում, մասնավորապես.

- ✓ մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների բարելավում,
- ✓ տնտեսության ընդհանուր կառուցվածքի արմատական փոփոխություն,
- ✓ մասնավորեցման և ապապետականացման գործընթացների օպտիմալացում,
- ✓ շուկայական ենթակառուցվածքների ձեւավորում և զարգացում:

Այս խնդիրների բարեհաջող լուծման նպատակով անհրաժեշտ էր գնաճի անսխառնեց բարձր տեմպերի նվազեցում, բյուջեի հաշվեկշռվածություն, գործարար ակտիվության պարբերաշրջանային տատանումների թուլացում և, որ ամենակարևորն է, գործարարության ու ձեռներեցության զարգացման նպատակով պայմանների ստեղծում: ԼՂՀ-ում իրագործվեցին տնտեսական նպատակաուղղված մի շարք բարեփոխումներ, որոնք նպատակ ունեին, ընդհանուր առմամբ, փոփոխության ենթարկել տնտեսության գործելակերպը և ստեղծել գերակշռող մասնավոր հատված: Առաջին նշանակալի քայլն արդյունաբերական, առևտրային և կենցաղային մի շարք օբ-

**Մասնավորեցված օբյեկտների քանակը 2009թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ\***

| Ոլորտներ                        | Ծրագրով սահմանված օբյեկտների քանակը | Գնահատված օբյեկտների |                 | Մասնավորեցված օբյեկտների |                 | Մասնավորեցման գործընթացի կատարողականը, % |
|---------------------------------|-------------------------------------|----------------------|-----------------|--------------------------|-----------------|--|
|                                 |                                     | քանակը               | արժեքը մլն դրամ | քանակը                   | արժեքը մլն դրամ |  |
| «Փոքր օբյեկտներ», այդ թվում՝    | 293                                 | 299                  | 188.3           | 289                      | 186.8           | 98.6                                     |
| առեւտրոր                        | 162                                 | 167                  | 136.8           | 161                      | 136.0           | 99.4                                     |
| հանրային սնունդ                 | 19                                  | 19                   | 12.3            | 18                       | 12.2            | 94.7                                     |
| կենցաղային սարքավորում          | 112                                 | 113                  | 39.2            | 110                      | 38.6            | 98.2                                     |
| Անավարտ շինարարության օբյեկտներ | 12                                  | 14                   | 42.5            | 12                       | 19.2            | 100.0                                    |
| Վարձակալված տարածքներ           | 252                                 | 252                  | 171.0           | 252                      | 171.0           | 100.0                                    |
| Կիսավեր օբյեկտներ               | 122                                 | 141                  | 204.0           | 120                      | 161.3           | 98.4                                     |
| Համայնք                         | 337                                 | 362                  | 354.8           | 332                      | 188.9           | 98.5                                     |
| Այլ                             | 29                                  | 31                   | 134.7           | 29                       | 115.9           | 100.0                                    |
| Ընդամենը                        | 1045                                | 1099                 | 1095.3          | 1034                     | 843.1           | 98.9                                     |


\*Տվյալները ըստ՝ ԼՂՀ ԱՎԾ, ԼՂՀ սոցիալ-տնտեսական վիճակը, 2009թ. հունվար-սեպտեմբեր, Տեղեկատվական եռամսյակային զեկույց, Ստեփանակերտ 2009, էջ 56

յեկտների մասնավորեցումն էր, որին չհապաղեց հետեւել գյուղատնտեսական հողերի մասնավորեցման ակտիվ գործընթացը: Արագ իրականացվող հողի սեփականաշնորհումը եղավ ԼՂՀ կառավարության լուրջ նվաճումներից մեկը, որի արդյունքում ստեղծվեցին գյուղացիական մասնավոր բազմաթիվ տնտեսություններ: «Հողերի սեփականաշնորհման մասին» ԼՂՀ օրենքի ընդունումից շուրջ վեց ամիս հետո հանրապետության հողատարածության մոտ 50%-ն արդեն մասնավորեցվել էր: Իսկ ամբողջությամբ գյուղատնտեսական հողերի մասնավորեցումը, ընդհանուր առմամբ, իրականացվել է 3-4 տարվա ընթացքում: Պետք է առանձնակի նշել այն հանգամանքը, որ բնակչության մեկ շնչին բաժին է ընկնում 0.6 հա հողատարածք՝ տնամերձ հողատարածքներով հանդերձ: Այնուամենայնիվ՝ հանրապետության տարբեր շրջաններում նկատվում էր սեփականաշնորհման տեմպերի տարբեր ցուցանիշներ՝ պայմանավորված ինչպես եղանակի գործոնով, այնպես էլ տարածաշրջանի լանդշաֆտի առանձնահատկություններով:

Այնուամենայնիվ՝ ԼՂՀ տնտեսական քաղաքականության կարեւոր ուղղություններից մեկը սեփականաշնորհման (մասնավորեցման) գործընթացն էր(տես՝ աղյուսակը):

Ներկայում հանրապետությունում ավարտվել է առեւտրի, հասարակական սննդի, կենցաղային սպասարկման եւ այլ փոքր ու միջին կառույցների մասնավորեցումը: 2009թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ՝ մասնավորեցվել են 1034 «փոքր», կիսավեր ու անավարտ շինարարության օբյեկտներ ու վարձակալված տարածքներ (կամ ծրագրով սահմանված օբյեկտների

**Մասնավորեցված օբյեկտների կառուցվածքն ըստ ք. Ստեփանակերտի եւ շրջանների (2009թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ)**



98.9%-ը), 68 կազմակերպություն եւ կազմակերպությունների կազմից առանձնացված 39 կառուցվածքային միավորներ: Մասնավորեցման կատարողականի համեմատաբար ցածր մակարդակ դիտվել է կիսավեր օբյեկտների եւ համայնքի գույքի մասնավորեցման գործընթացում՝ համապատասխանաբար 98.4% եւ 98.5%\*:

Հանրապետությունում «փոքր», կիսավեր եւ անավարտ շինարարության օբյեկտների ու վարձակալված տարածքների մասնավորեցված 1034 օբյեկտներից 492-ը կամ 47.6%-ը մասնավորեցվել է վարձակալների կողմից, 206-ը կամ 19.9%-ը՝ աճուրդի միջոցով, 168-ը կամ 16.2%-ը՝ աշխատանքային կոլեկտիվների կողմից, 138-ը կամ 13.4%-ը՝ ուղղակի վաճառվել է ևսխօրք հայտնի գնորդին, 29-ը կամ 2.8%-ը՝ ուղղակի անհատույց տրամադրման ձևով եւ 1-ը կամ 0.1%-ը՝ մրցույթային վաճառքի տեսքով:

Գծապատկերում ներկայացված է մասնավորեցված օբյեկտների կառուցվածքն ըստ տարածաշրջանների:

\* ԼՂՀ ԱՎԾ, ԼՂՀ սոցիալ-տնտեսական վիճակը, 2009թ. հունվար-սեպտեմբեր, Տեղեկատվական եռամսյակային զեկույց, Ստեփանակերտ 2009, էջ 56

**ՄԱՍՆԱՎՈՐԵՑՈՒՄԸ ԼՂՀ-ՈՒՄ**

**Տիգրան ՀԱԿՈՒՅԱՆ**  
Տնտեսագիտության  
թեկնածու

